ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА А РМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
МЕРЦАВАНСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավանի գյուղական համայնք
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1.
Հեռախոս (0231) 6-00-25
էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

02.04.2014թ.
թիվ 63

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. Ս. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ի կատարումն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77[1]-րդ հոդվածի 1-ին մասի, Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավարի 2014 թվականի մարտ ամսվա ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր 17 /տասնբյոթ/ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խաչուղի 2-րդ փողոց N1, հեռախոս (0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

5 մարտի 2014 թվականի N22-Ա

ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N47-Ն որոշումն, **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի 2014 թվականի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Ներկայացուցչական ծախսեր>> հոդվածով նախատեսված գումարից 255 000 ՀՀ դրամ տրամադրել համայնքի գյուղապետարանի աշխատակազմի, <<Մերձավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ, <<Կրթություն և մշակույթ >> միացյալ տնօրինության, <<Մերձավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ, <<Հայ փոստ>> ՓԲԸ Մերձավանի մասնաճյուղի, <<Մերձավանի բժշկական ամբուլատորիա>> ՊՓԲԸ աշխատակցուհիներին և համայնքի որոշ բնակչուհիներին /թվով 85 կին/ Կանանց տոնի՝ Մարտի 8-ի առթիվ նվերներ գնելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2014 թվականի մարտի 5

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք.Երևանյան
խաչուղի 2-րդ փողոց N1, հեռախոս (0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

11մարտի 2014 թվականի N23-Ա

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N47-Ն որոշումն, **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի 2014 թվականի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ մշակութային կազմակերպություններ>> հոդվածով նախատեսված գումարից, Կանանց միամսյակի կապակցությամբ, ձեռք բերել 50 հատ 1000 ՀՀ դրամ արժողությամբ թատրոնի տոմսեր և տրամադրել համայնքի կին բնակչուհիներին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2014 թվականի մարտի 11

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց N1, հեռախոս (0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

12 մարտի 2014 թվականի N24-Ա

<<ՄԵՐՁԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ ՀԱՇՎԵԿՇԻՌ ԳՈՒՅՔԵՐ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի դրույթներով, **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի համայնքային ենթակայության <<Կրթություն և մշակույթ>> միացյալ տնօրինության հաշվեկշռում գտնվող 330 000 ՀՀ դրամ արժողությամբ գույքը՝ վարչական սարքավորումները, տեղափոխել <<Մերձավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ հաշվեկշիռ, համաձայն հավելվածի:

2. Հիմնարկների ղեկավարներին՝ / Գ. Սարգսյանին և Վ.Խուրշուդյանին/ համապատասխան տեղափոխումների ձևակերպումները կատարել հաշվապահորեն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2014 թվականի մարտի 12

գ. Մերձավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավանի
գյուղական համայնքի ղեկավարի
2014 թվականի մարտի 12-ի
N24-Ա որոշման

<<ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ>> ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՑ <<ՄԵՐՁԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ ՀԱՇՎԵԿՇԻՌ ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ ՑԱՆԿԸ

Հ/Հ	Գույքի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդամենը /ՀՀ դրամ/
1.	Սղարան	հատ	1	130 000	130 000
2.	Ճոճանակ վեր ու վար	հատ	1	65 000	65 000
3.	Պտտվող խաղ	հատ	1	65 000	65 000
4.	Ճոճանակ	հատ	1	70 000	70 000
Ընդանենը					330 000

Գյուղապետարանի աշխատակազմի
քարտուղար Հրանտուհի Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց N1, հեռախոս (0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

25 մարտի 2014 թվականի N25-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 9-ի N47-Ն որոշման 2-րդ կետն, **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 9-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի 2014թվականի բյուջեն հաստատելու մասին>> N47-Ն որոշման մեջ կատարել վերաբաշխում՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2014 թվականի մարտի 24

գ. Մերձավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավանի
գյուղական համայնքի ղեկավարի
2014 թվականի մարտի 25-ի
N25-Ն որոշման

ՀԱՄԱՅՆՔԻ 2014ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ

1. 08 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 4269 հոդվածով նախատեսված գումարը՝ 950 000 ՀՀ դրամն, ուղղել 08 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 4239 հոդվածին:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀՐԱՆՏՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐԾԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավանի գյուղական համայնք.
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1.
Հեռախոս (0231) 6-00-25
էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

26 մարտի 2014թվականի N26-Ա

ՎԱՀԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ >> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 25-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 5[1]-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով 2014 թվականի մարտի 25-ին համայնքի ղեկավարի N3-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունը, **որոշում եմ.**

1. Վահան Սարգսյանի նկատմամբ կիրառել նախազգուշացում, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքում գտնվող , իրեն սեփականության իրավունքով պատկանող / կադաստրային համար՝ 04-065-0071-0051/ հողամասի վրա ինքնակամ շինարարություն կատարելու համար և դադարեցնել շինարարական աշխատանքները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2014 թվականի մարտի 25

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավանի գյուղական համայնք.
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1.
Հեռախոս (0231) 6-00-25
էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

31 մարտի 2014թվականի N27-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով, 8-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահանջված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի բնակիչ Մերուժան ժորայի Մարգարյանի /ծնված 02.01.1952թ./ 2014 թվականի մարտի 31-ի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի Կոմիտասի N 34 հասցեում գտնվող, իր և իր ընտանիքի անդամների կողմից զբաղեցրած 0,0531 հեկտար հողամասի /որից 9,6 քառակուսի մետրը ընդհանուր օգտագործման/ և այդ հողամասի վրա կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինություններն օրինականացնելու մասին ներկայացրած դիմումն, որն օրենքի ուժով կարող է փոխանցվել իրեն և իր ընտանիքի անդամներին, անհատույց սեփականության իրավունքով, **որոշում եմ.**

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի Կոմիտասի N 34 հասցեում գտնվող գույքային

միավորների նկատմամբ քաղաքացիներ Մերուժան ժորայի Մարգարյանի /ծնված 02.01.1952թ./, Ռոզա Կոստանի Խալաթյանի /ծնված 03.08.1954թ./ և Արայիկ Մերուժանի Մարգարյանի /ծնված 03.05.1976թ./ գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը օրինական 0,0531 հեկտար տնամերձ հողամասի /որից 9,6 քառակուսի մետր ընդհանուր օգտագործման/ և այդ հողամասում կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ / բնակելի տունը 264,3 քառակուսի մետր՝ կառուցված 1959 թվականին, անասնաշենք 17,9 քառակուսի մետր՝ կառուցված 1959 թվականին/:

Վերականգնումը կատարվում է անհատույց սեփականության իրավունքով:

2. Բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների մակերեսները, կառուցման տարեթվերը ներկայացված են <<ՄԱՉԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ>> ԱՁ -ի կողմից /որակավորման վկայական թիվ 0244 / կազմված հատակագծում ու ենթակա են ճշտման նրա կողմից :

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արմավիրի մարզային ստորաբաժանմանը՝ գրանցելու քաղաքացիներ Մերուժան ժորայի Մարգարյանի /ծնված 02.01.1952թ./, Ռոզա Կոստանի Խալաթյանի /ծնված 03.08.1954թ./ և Արայիկ Մերուժանի Մարգարյանի /ծնված 03.05.1976թ./ սեփականության իրավունքը՝ սույն որոշման 1-ին կետում նշված տնամերձ հողամասի և այդ հողամասում առկա բնակելի տան ու բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4. 04-065-0052-0003 կադաստրային համարով բնակելի տանը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինություններին տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, մարզ Արմավիրի, գյուղ Մերձավան, Կոմիտասի N 34:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2014թվականի մարտի 31

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավանի գյուղական համայնք.
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1.
Հեռախոս (0231) 6-00-25
էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

31 մարտի 2014թվականի N28-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով, 8-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահանջված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի բնակիչ Մարտին ժորայի Մարգարյանի /ծնված 06.03.1956թ./ 2014 թվականի մարտի 31-ի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի Կոմիտասի N 36 հասցեում գտնվող, իր և իր ընտանիքի անդամների կողմից զբաղեցրած 0,0301 հեկտար օրինական հողամասի և այդ հողամասի վրա կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինություններն օրինականացնելու մասին ներկայացրած դիմումն, որն օրենքի ուժով կարող է փոխանցվել իրեն և իր ընտանիքի անդամներին, անհատույց սեփականության իրավունքով, **որոշում եմ.**

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի Կոմիտասի N 36 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացիներ Մարտին ժորայի Մարգարյանի /ծնված

06.03.1956թ./, Սարգյուլ Արամայիսի Հովագիմյանի /ծնված 27.06.1963թ./ և Էդգար Մարտինի Մարգարյանի /ծնված 05.04.1984թ./ գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը օրինական 0,0301հեկտար տնամերձ հողամասի և այդ հողամասում կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ / բնակելի տունը 212,0 քառակուսի մետր՝ կառուցված 1959 թվականին, անասնաշենք 16,9 քառակուսի մետր՝ կառուցված 1959 թվականին/:

Վերականգնումը կատարվում է անհատույց սեփականության իրավունքով:

2. Բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների մակերեսները, կառուցման տարեթվերը ներկայացված են <<ՄԱՉԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ>> ԱՁ-ի կողմից /որակավորման վկայական թիվ 0244 / կազմված հատակագծում ու ենթակա են ճշտման նրա կողմից :

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արմավիրի մարզային ստորաբաժանմանը՝ գրանցելու քաղաքացիներ Մարտին ժորայի Մարգարյանի /ծնված 06.03.1956թ./, Սարգյուլ Արամայիսի Հովագիմյանի /ծնված 27.06.1963թ./ և Էդգար Մարտինի Մարգարյանի /ծնված 05.04.1984թ./ սեփականության իրավունքը՝ սույն որոշման 1-ին կետում նշված տնամերձ հողամասի և այդ հողամասում առկա բնակելի տան ու բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4. 04-065-0052-0005 կադաստրային համարով բնակելի տանը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինություններին տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, մարզ Արմավիրի, գյուղ Մերձավան, Կոմիտասի N 36:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2014թվականի մարտի 31

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավանի գյուղական համայնք.
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1.
Հեռախոս (0231) 6-00-25
էլ. փոստ gyuxmerdzavan @ mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

31 մարտի 2014թվականի N29-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով, 8-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահանջված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի բնակչուհի Գրետա Ռաֆիկի Կիրակոսյանի /ծնված 05.01.1967թ./ 2014 թվականի մարտի 31-ի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի Կոմիտասի N 34/1 հասցեում գտնվող, իր և իր ընտանիքի անդամների կողմից զբաղեցրած 0,0179 հեկտար /որից 9,6 քառակուսի մետրը ընդհանուր օգտագործման/ օրինական հողամասի և այդ հողամասի վրա կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինություններն օրինականացնելու մասին ներկայացրած դիմումն, որն օրենքի ուժով կարող է փոխանցվել իրեն և իր ընտանիքի անդամներին, անհատույց սեփականության իրավունքով, **որոշում եմ.**

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի Կոմիտասի N 34/1 հասցեում գտնվող գույքային

միավորների նկատմամբ քաղաքացի Գրետա Ռաֆիկի Կիրակոսյանի /ծնված 05.01.1967թ./ գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0,0179 հեկտար / որից 9,6 քառակուսի մետրը ընդհանուր օգտագործման/ տնամերձ հողամասի և այդ հողամասում կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ /բնակելի տունը 284,7 քառակուսի մետր՝ կառուցված 1959 թվականին, բաց պատշգամբ 40,0 քառակուսի մետր՝ կառուցված 1959 թվականին/:

Վերականգնումը կատարվում է անհատույց սեփականության իրավունքով:

2. Բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների մակերեսները, կառուցման տարեթվերը ներկայացված են <<ՄԱՉԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ>> ԱՁ-ի կողմից /որակավորման վկայական թիվ 0244 / կազմված հատակագծում ու ենթակա են ճշտման նրա կողմից :

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արմավիրի մարզային ստորաբաժանմանը՝ գրանցելու քաղաքացի Գրետա Ռաֆիկի Կիրակոսյանի /ծնված 05.01.1967թ. /սեփականության իրավունքը՝ սույն որոշման 1-ին կետում նշված տնամերձ հողամասի և այդ հողամասում առկա բնակելի տան ու բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4. 04-065-0052-0004 կադաստրային համարով բնակելի տանը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինություններին տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, մարզ Արմավիրի, գյուղ Մերձավան, Կոմիտասի N 34/1:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2014թվականի մարտի 31

գ. Մերձավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խաչուղի 2-րդ փողոց N1, հեռախոս (0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

3 մարտի 2014 թվականի N2-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի դրույթներով, **կարգադրում եմ.**

1.Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովին՝ (Ա. Եսայանին) ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի համայնքային ենթակայության շենք-շինությունների ընթացիկ վերանորոգման աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտությունը, գնահատել իրավիճակը և կատարվելիք աշխատանքների վերաբերյալ կազմել թերությունների ակտ:

3.Հանձնաժողովին (Ա. Եսայանին) սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել մեկամսյա ժամկետում և զեկուցել համայնքի ղեկավարին:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2014 թվականի մարտի 3

գ. Մերձավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավանի
գյուղական համայնքի ղեկավարի
2014 թվականի մարտի 3-ի
N 2-Ա կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ – Ա.Եսայան՝ համայնքի ղեկավարի տեղակալ.

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Թորոսյան – ավագանու անդամ.

Հ. Շամբարյան– ավագանու անդամ.

Գ. Սարգսյան - <<Մերձավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ տնօրեն.

Վ. Խուրշուդյան - <<Կրթություն և մշակույթ>> միացյալ տնօրինության տնօրեն:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **ՀՐԱՆՏՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց N1, հեռախոս (0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

25 մարտի 2014 թվականի N3-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 5[1]-րդ կետի, 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի դրույթներով, **կարգադրում եմ.**

1.Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովին՝ (Մ. Խուրշուդյանին) հայտնաբերել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքում կատարվող ինքնակամ շինարարական աշխատանքները:

3.Հանձնաժողովին՝ (Մ. Խուրշուդյանին) սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնելիս գնահատել իրավիճակը, ուսումնասիրել և արձանագրել հայտնաբերված խախտումները:

Ելնելով ուսումնասիրությունների արդյունքներից՝ կազմել համապատասխան արձանագրություն և երկօրյա ժամկետում զեկուցել համայնքի ղեկավարին:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2014 թվականի մարտի 25

գ. Մերձավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավանի
գյուղական համայնքի ղեկավարի
2014 թվականի մարտի 25-ի
N 3-Ա կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ –՝ Վ. Խուրշուդյան - <<Կրթություն և մշակույթ>> միացյալ տնօրինության տնօրեն .

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Գրիգորյան – համայնքային ծառայող.

Պ. Գրիգորյան – համայնքի հավագանու անդամ.

Հ. Շամբարյան – համայնքի ավագանու անդամ.

Կ. Մնացականյան - համայնքի ավագանու անդամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ /ՀՐԱՆՏՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ